## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Սիս համայնքի, գ.Սիս, հեռ. 077-200-720
Էլ. փոստ` sis.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<02>> Դեկտեմբերի 2015 թվականի N 24

### ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 09 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական Ինքնակառավարման մասին »Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով` *համայնքի ավագանին որոշում է.*

Հաստատել թիվ 09 նիստի օրակարգը:

1. Սիս համայնքի տարածքում 2016 թ-ի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին :
2. 2016 թ-ի համար ՀՈԱԿ <<Անուշիկ >> մանկապարտեզի ծնողական գումար , վարձավճար սահմանելու մասին:
3. Սիս համայնքի հաշվեկշռում գտնվող գույքի գույքագրման արդյունքների հաստատման մասին:

Ավագանու անդամներ`

Կողմ (7) Դեմ (0) Ձեռնպահ(0)

Ա. Բեգունց
Գ. Առաքելյան
Ե.Լազգիյան
Ս. Խաչատուրյան
Ա. Մարգարյան
Ռ. Աթայան
Կ. Քիշմիրյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ԱՐՄԵՆ ԵՂՅԱՆ

2015 թ. Դեկտեմբերի 02
գ. Սիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Սիս համայնքի, գ.Սիս, հեռ. 077 200-720
Էլ. փոստ sis.ararat@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

<<02>> Դեկտեմբերի 2015 թվականի N 25-Ն

## ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016 Թ-Ի ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ, 11-րդ հոդվածների և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի դրույթներով *համայնքի ավագանին որոշում է`*

Սահմանել Սիս համայնքում տեղական տուրքերի 2016 թ-ի համար հետևյալ դրույքաչափերը`

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան` նոր շենքերի, շինությունների (ներառյալ` ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է`
   հիմնական օբյեկտների համար
   ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի տան, այդ թվում` այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար ------------------------------------------------ 7500 դրամ.
   բ) սույն կետի ա/ ենթակետում չնախատեսված օբյեկտների համար`
   բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար` ------------------------------------------------ 15000 դրամ.
   բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար` ------------------------------------------------25 000 դրամ.
   բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ------------------------------------------------ 35 000 դրամ.
   բդ) 3001-ից ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ------------------------------------------------ 100000 դրամ
   ոչ հիմնական շինությունների տեղադրման համար`
   գ) մինչև 20 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար` ----------- 1000 դրամ,
   դ) 20 և ավելի քմ.ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար` ---------- 2500 դրամ
2. Սիս համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված`

շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ տեղական տուրքը սահմանվում է ------------------------------------------------------------ 1500 դրամ
բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն որոշման ա/ ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.
գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն որոշման իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:
3. Մեր համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է- 2500 դրամ:
4. Մեր համայնքի տարածքում տեղական տուրք սահմանվում է՝
1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար տեղական տուրքը սահմանվում է----------------------------- 2500 դրամ.
2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար տեղական տուրքը սահմանվում է՝ ----------------------------------------2500 դրամ:
5. Մեր համայնքի վարչական տարածքում՝
ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր օրվա համար 1 քմ-ի համար սահմանվում է---------------------- 350 դրամ:
բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանվում է --------------------------------------- 150 000 դրամ.
գ) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝----------30000 դրամ.
գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ ------------------------------------------------------------------3000 դրամ.
գբ) ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ ------------------------------------------------------------ 500 դրամ.
5.1. Մեր համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի համար՝ յուրաքանչյուր տարվա թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է ---- 50000 դրամ:
6. Մեր համայնքի վարչական տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով

խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ ---------------------------------------------------40 000 դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ --------------------------50 000 դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ ---------------------------------------------300 000 դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ ---------------------------------------------750 000 դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ --------------------------------------300 000 դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ -----------------------------------------125 000 դրամ:

7. Սիս համայնքի վարչական տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քմ-ի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային (ալկոհոլի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ -----------------------------------------1500 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (ալկոհոլի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ ---------------------------2500 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ ------------------------------------------------1000 դրամ.

դ) լուսային գովազդային վահանակների համար՝ -----------------------------700 դրամ:

8. Սիս համայնքի խորհրդանիշերի (զինանշանի) պատճեններ և կրկնօրինակներ արտադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ -----------1 000 դրամ:

9. Սիս համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել------------ 5 000 դրամ:

10. Հայաստանի Հանրապետության Սիս համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել-----------------------------50 000 դրամ:

11. Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար ընթացիկ տարվա համար սահմանել.

1) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2 500 000 ՀՀ դրամ:

2) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5 000 000 ՀՀ դրամ:

3) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7 000 000 ՀՀ դրամ:

4) 10 հա-ից ավելի մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10 000 000 ՀՀ դրամ:

Սահմանել Սիս համայնքի վարչական տարածքում տեղական վճարների 2016 թ. հետևյալ դրույքաչափերը՝

12. Սիս համայնքի վարչական տարածքում շինարարության կամ շենքերի արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքները կատարելու հետ կապված տեխնիկական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է՝ ---------- 2000 դրամ

13. Տեղական ինքնակառավարման մարմինների սեփականության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է՝ ----------- 3000 դրամ

14. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար սահմանել ---------------- 2000 դրամ:
15. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց աղբահանության տեղական վճարը սահմանվում է յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական ---------------------------------------------------------------------------5 դրամ:
16. Շինարարական և խոշոր եղջերավորի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար սահմանել ---------------------------------------------------------------2000 դրամ:

-- Սիս համայնքի վարչական տարածքում բոլոր վճարողների համար սահմանել տեղական տուրքերի և վճարների միասնական դրույքաչափեր:
-- 2016 թ-ի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի փոփոխություններ չեն կարող կատարվել:
--«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկվել է 0,5 գործակցի կիրառմամբ:
- Տեղական տուրքերը և վճարները ճիշտ հաշվակելու ժամանակին գանձելու պատասխանատվությունը դնել կրտսեր խմբի 1-ին կարգի մասնագետի վրա:
- Տեղական տուրքերի և վճարների հաշվարկելու և գանձելու կարգի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը:

Ավագանու անդամներ՝

Կողմ (7) Դեմ (0) Ձեռնպահ(0)

Ա. Բեգոյան
Գ. Առաքելյան
Ե.Լազգիյան
Ս. Խաչատուրյան
Ա. Մարգարյան
Ռ. Աբաղյան
Վ. Բիշխիյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԵՂՅԱՆ

2015 թ. Դեկտեմբերի 02
գ. Սիս

14. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար սահմանել --------------------- 2000 դրամ:
15. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանություն կազմակերպելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց աղբահանության տեղական վճարը սահմանվում է յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական -------------------------------------------------------------------------------5 դրամ:
16. Շինարարական և խոշոր եղջերավորի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար սահմանել ------------------------------------------------------------------------------2000 դրամ:

-- Սիս համայնքի վարչական տարածքում բոլոր վճարողների համար սահմանել տեղական տուրքերի և վճարների միասնական դրույքաչափեր:
-- 2016 թ-ի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի փոփոխություններ չեն կարող կատարվել:
--<<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկվել է 0,5 գործակցի կիրառմամբ:
-- Տեղական տուրքերը և վճարները ճիշտ հաշվակելու ժամանակին գանձելու երաշխավորությունը դնել կրտսեր խմբի 1-ին կարգի մասնագետի վրա:
-- Տեղական տուրքերը և վճարները հաշվարկելու և գանձելու կարգի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը:

Ավագանու անդամներ՝

Կողմ (7) Դեմ (0) Ձեռնպահ(0)

Ա. Բեգունց
Գ. Առաքելյան
Ե.Լազգիյան
Ա. Խաչատրյան
Ա. Մարգարյան
Ռ. Աթանյան
Գ. Բիշմիրյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԵՂՅԱՆ

2015 թ. Դեկտեմբերի 02
գ. Սիս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Սիս համայնք, գ.Սիս, հեռ. 077 200 720
էլ. փոստ` sis.araratmtag.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<02>> Դեկտեմբերի 2015 թվականի N 26 -Ն

## 2016 Թ-Ի ՀԱՄԱՐ ՀՈԱԿ <<ԱՆՈՒՇԻԿ >> Մ/ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ՎԱՐՁԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը` *համայնքի ավագանին որոշում է.*

Սիս համայնքի <<Անուշիկ >> մ/մանկապարտեզ ՀՈԱԿ-ում ծնողական գումարի վարձավճարի չափը 2016 թ-ի համար սահմանել ամսական 4000 դրամ:

Ավագանու անդամներ

| Կողմ (7) | Դեմ (0) | Ձեռնպահ(0) |
|---|---|---|
| Ա. Բեգլոյան | | |
| Գ. Առաքելյան | | |
| Ե.Լազգիյան | | |
| Ա. Խաչատուրյան | | |
| Ա. Մարգարյան | | |
| Ռ. Աթասյան | | |
| Կ. Քոչմիրյան | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ԱՐՄԵՆ ԵՂՅԱՆ

2015 թ. Դեկտեմբերի 02
գ. Սիս

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԽՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ
Մխս համայնք, գ.Մխս, հեռ. 077-200-720
էլ. փոստ [illegible]@[illegible].am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<02>> Դեկտեմբերի 2015 թվականի N 27

### ՄԽՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետի դրույթներով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

Հաստատել համայնքի հաշվեկշռում գտնվող գույքի գույքագրման արդյունքները համաձայն 2015 թ. նոյեմբերի 30-ին կազմված գույքագրման ակտի:

/Ակտը կցվում է/

Ավագանու անդամներ՝

| Կողմ (7) | Դեմ (0) | Ձեռնպահ(0) |
| --- | --- | --- |
| Ա. Բեգունց | | |
| Գ. Աշարեյան | | |
| Ե. Լազգիյան | | |
| Ա. Խաչատրյան | | |
| Ա. Մարգարյան | | |
| Ռ. Աթայան | | |
| Կ. Քիշմիրյան | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԵՂՅԱՆ

2015 թ. Դեկտեմբերի 02
գ. Մխս

# ԱԿՏ

գ.Սիս 30.11.2015 թ.

Մենք ներքո ստորագրողներս հանձնաժողովի նախագահ՝ գյուղապետի տեղակալ՝ Ռ.Գալստյան , հանձնաժողովի անդամներ՝ Ժ.Գազարյան , Յ.Հարությունյանը կազմեցինք սույն ակտը հետևյալի մասին:

Համաձայն գյուղապետի 27.11.2015 թ. թիվ 22 կարգադրության անցկացվել է Սիս համայնքի հիմնական միջոցների գույքագրում :

| N | Անվանումը | Քանակը | Հաշվեկշռային արժեքը հազ.դրամով | Ընդամենը հազ.դրամ |
|---|---|---|---|---|
| 1 | Համակարգիչ ՊԵՆՏԻՈՒՄ-4 | 1 | - | - |
| 2 | Դյուրակիր համակարգիչ HP | 1 | 417.0 | 417.0 |
| 3 | Հոսանքի կարգավորիչ | 1 | 25.0 | 25.0 |
| 4 | Գյուղապետարանի վարչական շենք | 1 | 32945.1 | 32945.1 |
| 5 | Հանդիսությունների սրահ | 1 | 10849.7 | 10849.7 |
| 6 | Տրակտոր | 1 | - | - |
| 7 | Կցասայլ | 1 | - | - |
| 8 | Ենթակայան | 1 | - | - |
| 9 | Սեղան | 2 | - | - |
| 10 | Սեղան | 4 | - | - |
| 11 | Օֆիսային կրեսլո | 1 | 36.0 | 36.0 |
| 12 | Օֆիսային կրեսլո | 11 | 165.0 | 165.0 |
| 13 | Երկաթյա գրադարակներ | 10 | - | - |
| 14 | Բուժ ամբուլատորիայի շենք | 1 | 28502.4 | 28502.4 |
| 15 | Բնակելի շենքեր | 1 | - | - |
| 16 | Ավտոմեքենա ՎԱԶ- 21074 | 1 | - | - |
| 17 | Ավտոմեքենայի վրա տեղադրված սեխմիչ գազի սարք | 1 | - | - |
| 18 | Ջկնորսական տնակ | 1 | 32.6 | 32.6 |
| 19 | Տնտեսական պահեստ | 1 | 55.2 | 55.2 |
| 20 | Արտաքին լուսավորության ցանց | 1 | 5810.2 | 5810.2 |
| 21 | Ավտոկանգառներում տեղադրված շվաքարաններ | 5 | 1700.0 | 1700.0 |
| 22 | Անվադող | 4 | 120.0 | 120.0 |
| 23 | Մարտկոց | 1 | 30.0 | 30.0 |
| 24 | Սեղան օֆիսային | 1 | 150.0 | 150.0 |
| 25 | Սեղան նստարաններ | 30 կոմպլ. | 1740.0 | 1740.0 |
| 26 | Սալաթի ափսե | 80 | 25.6 | 25.6 |
| 27 | Թխվածքի ափսե | 40 | 68.0 | 68.0 |
| 28 | Կոնֆետի ափսե | 40 | 52.0 | 52.0 |
| 29 | Միջին չափսի ափսե | 200 | 68.0 | 68.0 |
| 30 | Փոքր չափսի ափսե | 200 | 60.0 | 60.0 |
| 31 | Պանրի ափսե | 40 | 12.8 | 12.8 |
| 32 | Հավի ափսե | 40 | 12.8 | 12.8 |
| 33 | Երշիկի ափսե | 40 | 13.6 | 13.6 |
| 34 | Բանջարեղենի ափսե | 40 | 13.6 | 13.6 |
| 35 | Թթվի ափսե | 40 | 12.8 | 12.8 |
| 36 | Խորովածի ափսե | 40 | 20.0 | 20.0 |
| 37 | Քյուֆտայի ափսե | 40 | 20.0 | 20.0 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 38 | Խաշլամայի ափսե | 40 | 20.0 | 20.0 |
| 39 | Սուրճի բաժակ | 100 | 22.0 | 22.0 |
| 40 | Մոխրաման | 40 | 13.2 | 13.2 |
| 41 | Բացիչներ | 40 | 4.0 | 4.0 |
| 42 | Մեծ սկուտեղ | 2 | 3.0 | 3.0 |
| 43 | Օղու բաժակ | 200 | 28.0 | 28.0 |
| 44 | Հյութի բաժակ | 200 | 42.0 | 42.0 |
| 45 | Գդալ | 40 | 3.0 | 3.0 |
| 46 | Պատարաքաղ | 200 | 15.0 | 15.0 |
| 47 | Դանակ | 40 | 4.8 | 4.8 |
| 48 | Աղաման | 40 | 10.8 | 10.8 |
| 49 | Ձեյթունի ափսե | 40 | 10.8 | 10.8 |
| 50 | Մրգի ափսե | 40 | 84.0 | 84.0 |
| 51 | Ձկան ափսե | 40 | 40.0 | 40.0 |
| 52 | Ավտոմեքենա HYUNDAI ELANTRA 1.6 M/T | 1 | 6166.7 | 6166.7 |
| 53 | Տնտեսական գույք | 6 | 450.0 | 450.0 |
| 54 | Խոլ | 1 | 190.0 | 190.0 |
| 55 | ժուրնալի սեղան | 1 | 58.0 | 58.0 |
| 56 | Աթոռներ | 6 | 72.0 | 72.0 |
| 57 | Գազասարքի տեղադրում | 1 | 450.0 | 450.0 |
| | Ընդամենը | | 90644.7 | 90644.7 |

Սիս համայնքի հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը կազմում է 90644.7 հազար դրամ / իննսուն միլիոն վեց հարյուր քառասունչորս հազար յոթ հարյուր դրամ / :

Սույն ակտը կազմված է երկու թերթից :

Հանձնաժողովի նախագահ՝ Ռ.Գալստյան

անդամներ՝ Ժ.Գազարյան

Յ.Հարությունյան

գ.Սիս 30.11.2015 թ.